

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկա 712 . . . Թր.
Վեցամսեայ 6 «

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու քիւ մէկ ծրարով
Տարեկան . . . 14 Թր.

Վեցամսեայ . . . 7 «

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար
Վեցամսեայ 1.50 «

ԿԱՆԻՆԻԿ

Ծանոցման տողը
20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՑԷ

Rédaction du journal

„ИРАВУНК“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

Иравунк“

ВАРНА

Գրութիւնք եւ չէն
տրոշիր

ԱԶԳ.

Ինչպէս իրաւունք լը՝ գերը , նոյնպէս եւ Պօլսոյ «ԼՈՅՍ» շաբաթօթիկը կը ծախուի Սասունի սրճարանին կից ծխալաւանի խանութը : Փափաքողք դիմելու են հետեւեալ հասցէին :

Վ. Քիւչիւկեան Ծխալաւան
մուսալա Վարնա

ԱՆՆՊԱՏԱԿ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹԻՒՆ

Եթէ ասեմք որ մեզանում, հայերիս մօտ, չկայ որ և է աշխատանք, որ եւ է գործունէութիւն, որ և է շարժում, սխալուած կլինինք, ի հարկէ : Թոյլ տալ մեր կողմից այդպիսի յանգրգնութիւն, ալի կլինէր ոչ միայն հրաւիրել մեր վերայ ամեն կողմից շահագորգիւնների բարեկութիւնը, զայրոյթը, շանթի ու որոտը, այլ և բաց աչքերով դէմ գնացած կը լինէինք ամենօրեայ կոշտ, խտացած իրողութիւններին, որոնք անսխալապէս կհերքէին մեզ :

Ինչպէս, կասէին մեզ ամեն կողմից մի՞թէ աշխատել չէ, մի՞թէ շարժիլ ու գործել չէ որ ամեն տեղ, ամեն կէտի վերայ, խօսում են, գրում են, կանչում են, աղաղակում են, կուռում են, հաւաքում են, մտածում են, հանգանակում են, ծախսում են, վերջապէս անում են, այս անում են այն, մի՞թէ այս բոլորը աշխատանքի ու գործունէութեան նշաններ չեն, ուրիշ թէ այս բոլորը պարզ չեն ցոյց տալիս որ հայութեան մէջ կեանք կայ, կենդանութիւն կայ, եւ ու զեւ կայ, ինչպէս ասում են ոմանք, որ վերջապէս կդայ կը հասնի գեղեցիկ օրը, բաղձալի օրը, երբ կիրադործուի ամենիս իտեալը, երբ ձեռք կբերուի Մեծ Նպատակը...

Այդ բոլորը՝ ինչ որ ասում են կամ չեն, որ կասեն մեզ՝ ճիշդ է : Այո, ճիշդ է և անհերքելի որ ինչքան էլ նախանձելու առանձին բան չունենանք այդ կողմ

մից, իրողութիւն էսակայն որ մեզ մօտ էլ աշխատանք կայ, որ մեզ մօտ էլ գործունէ է, շարժում է և գուցէ աւելի, որքան չէ թուում այդ իսկապէս :

Իայց ի՞նչ է պատճառը, հարցնում ենք այն ժամանակ մենք, ի՞նչ է պատճառը որ հակառակ այդ բոլորին, հակառակ գործ դրուած աշխատանքին ու պարզուած գործունէութեան, հակառակ տարիներեց ի վեր ցոյց տրուած շատերիս համար նոյն իսկ գուցէ անակնկալ կենսունակութեան, անհատական և հաւաքական անհաշուելի, անգնահատելի զոհաբերութեան, հակառակ սպառուած, ծախսուած, բարոյական, մտաւորական և ֆիզիքական ահադին կորովին, էնէրգիային, գործը մնում է սակայն չաւարտած, նպատակը մընում է ձեռք չբերուած :

Պատճառը, մեր կարծիքով, շատ պարզ է : Այդ նրա համար որ ձեռք բերուելիք նպատակը ամենի համար էլ լինելով մէկ, գործ դրուած աշխատանքի մէջ, պարզուած կորովի մէջ չկայ սակայն միակերպ մտածուած միտք, միակերպ հասկացուած նպատակ : Այդ նրա համար որ մեր գործունէութեան եղանակի մէջ բացարձակապէս պակասում է միակերպ մտածուած, միակերպ գծուած ու գործադրուած ուղղութիւն, որ չունինք ո՛չ մի ընդհանուր եւ մի, ո՛չ մի ամբողջութիւն և մի, ո՛չ մի կապ կապակցութիւն գործող համախմբութեան միջև : Այդ նրա համար որ գործող խմբերը մտածում են եւ գործում ամեն մէկը առանձին իրեն համար, առանձին իրա հաշուին, առանց դիտենալու թէ ինչէ մտածում և ինչպէս է ուղղում գործել միւսի մօտ : Նրանք բոլորն էլ ուղղում են հասնիլ միեւնոյն նըպատակին, միեւնոյն կէտին, բայց մի բոլոր չեն զիջանում հաւաքուել, մի մեանց մօտ գալ՝ միասին մտածելու, միասին վայր բերելու, համեմատ ծագող նոր գէպքերին, համեմատ մշտական

նպատակի շարժումն հանգամանքներին, բոլոր այն միջոցները, որոնք նպատակադարձար կարող են յայտնուիլ առաջադրուած եւ բոլորի համար էլ մէկ եղող նըպատակին :

Այդպէս, նրանց ոյժերը, նըրանց կորովը, նրանց գործունէութիւնն ու աշխատանքը մտանում են սոսկալի անիշխանութեան, քասօի, բաբիւնի, որոնք, այդ խիտ հասկնալի պատճառով էլ, մնում են անմիտ, աննպատակաւոր, անկարգ, անկանոն, հետեւաբար և ամուլ :

Փաստե՛ր էք ուղղում : որքան ուղղում էք, Աննպատակ չէ՞ որ գումարուին առանձին, առանձին մօտաւորապէս եօթնամիսեայ ժամանակամիջոցում, որ մեր անմիջական անցեալն է՝ սկսած այսօրից, չորս պատկառելի յեղափոխական Պատգամաւորական ժողովներ, Դաշնակցական, Հին Հնչակեան, Նոր Հնչակեան և Միութեանական, մտածելու համար թէ որոնք են այն լաւագոյն միջոցներն ու կերպերը, որոնց գործադրութեամբ կարելի կլինէր ջախջախել թշնամին, այսինքն այն թշնամին, որ նըրանց բոլորին համար էլ մէկ և միեւնոյն է, և իրադործել նպատակը, այսինքն այն գաղափարը, որ նրանց ամենի համար էլ մէկ միեւնոյն է, այն է՝ Մայր Հայրենիքի, Հայաստանի, ազատութիւնը, և մի բոլոր հաշիւ չտան իրենց որ գործելու այդ կերպը անմիտ է, աննպատակ է և փաստակար :

Մի՞թէ ամենատարակաւ ողջ մըտութիւնը չէ թելադրում մեզ որ բոլորովին միտք չունի բաժնուիլ առանձին առանձին խմբերի, քաշուիլ առանձին սենեակներու մէջ, ամուր կզպել դռները միւսների առաջ և չը տեսնել թէ ինչ է կատարում իրենց դրացիների մօտ, երբ մտածման սենեակներից դուրս գալուց ու գործողութիւնների բաց աշխարհը մտնելուց յետոյ նրանք ամենքն էլ պէտք է դիմագրաւեն միեւնոյն թշնամուն,

որ նրանց բոլորին էլ ընդհանուր է, միեւնոյն ոյժին, որ նրանց կարող է հանդիպիլ առանձին առանձին եւ ամենքին էլ առանձին առանձին ջախջախել, փճացնել, ոչնչացնել :

Ինչպէս ուղղում են թող դատեն : Մենք կասենք որ գործունէութեան այս կերպը անմիտ է և աննպատակ : Նա ուրիշ բանի չէ կարող յանգեցնել մեզ, բայց եթէ նրան որ մենք դատապարտուած կլինինք դեռ երկար մնալու միեւնոյն տեղի վերայ, եթէ ոչ յետ գնալու, որ մենք դատապարտուած կլինինք մշտապէս ջուր ծեծելու, մշտապէս միեւնոյն ցեխը տրտրելու : Այո, այս գնացքով, այս ուղղութեամբ շարունակելով գործը՝ հաւատացած պէտք է լինինք որ մեզանից ոչինչ չի դուրս գալ : Ինչո՞ւ : Որովհետեւ մենք չենք իմանում կատարել մեծ գործի պահանջած պայմանները : Որովհետեւ մենք չենք իմանում միանալ, միասին մտածել, միասին շարժիլ ու միասին գործել մի գործի համար, որ ընդհանուրիս կեանքի ու դուրսութեան առաջին անհրաժեշտ պայմանն է : Որովհետեւ մենք չենք իմանում ծռել, ենթարկել յարմարեցնել, մեր մասնակի մտածումների, զգացումների, շահերի ու ամեն կարգի առանձնական նկատումների աշխարհը ընդհանուրի շահերի, ընդհանուրի մտածման ու պահանջների աշխարհին : Մենք սիրում ենք անիշխանութիւն, առանձնականութիւն, աղանդաւորութիւն :

Եւ որովհետեւ մենք այդպէս ենք, այսպէս էլ կմնանք : միշտ վիզերս ծռած, միշտ գլուխներս քարշ միշտ հողիներին մէջ վիշտ, դաւնութիւն և չյագեցած վրէժանդրութիւն...

Եւ անճարակ նախանձ մեզանից լաւերին, և աղաչաւոր ուրիշների առաջ :

Եւ մեր աշխատանքը, մեր գործունէութիւնը կմնան ան-

պտուղ , ամուլ , անհետեանք ,
քանի նրանք այդպէս գործ կը
գործին աննպատակ , առանց
միակերպ գործեան ու մէթոտի .
Մենք կլինինք արժանի մեզ ,
քանի մենք այդպէս կլինինք :

Հնայեակ Խոշարեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Քաղաքական աշխարհում տիրապետող
իրողութիւնը Ռուս-Ճապոնական պա-
տերազմն է . նա է որ ամբողջապէս թը-
ւում է գրաւած լինել , ինչպէս հասա-
րակ մահկանացուների , ամբոխի . լաղ-
մութեան , որ միշտ սիրող է եղած պա-
տերազմական փայլուն . սպառնալիչ
դէպքերի , նոյնպէս փոքր ու մեծ աղ-
գերի , տէրութիւններէ նշանաւոր մար-
դերի եւ պետական անձերի բոլոր ու-
շաղղութիւնը . Նրան են հետեւում ա-
մենք . նրա ամենօրեայ կրած փոփո-
խութիւններին են նուիրում իրենց խո-
սակցութեան ամենամեծ մասը . Ուրիշ
ամեն ինչիւնք , ծագած երկրագնդի
այս կամ այն կէտի վրայ , շատ քիչ
կամ չափաւոր կերպով են հետա-
քըքում . նրանք անցել են երկրորդա-
փն , երրորդական պլանի վերայ , թէեւ
կարող էր լինել որ նրանցից մէկը կամ
միւսը լիքը լինէր կարելի պատահա-
կան ամենամանր , ամենախոշոր հետե-
ւանքներով :

Եւ այդ՝ ոչ առանց հասկանալի պատ-
ճառի . Որովհետեւ կրկէսի վերայ կըռ-
ուի ասպարէզ ելնողները արհամարհելի
սնչութիւնները չեն . երկու հոսիւն
ըմբռնել են , զինուած ամենակորովի
մկանունքներով . որոնց մենամարտի
այս կամ այն կերպ վերջանալուց , մէկի
կամ միւսի յաղթութիւնը կամ պար-
տութիւնը կախուած կարող են լինել ,
եթէ ոչ բացարձակապէս , գոնէ համե-
մատաբար , ուղղակի կերպով նախ ի-
րենց , կոռուողներ , անուղղակի կեր-
պով նրանց իւրաքանչիւրի բաղդի սալ-
լին կապուած եւ նրանց ետեւից զլրուող
ազգերի կենսական շահերը . գոցէ
նոյն խի կենսաբան , գոյութիւնը :

Ինչպէս որ էլ լինի պատերազմի
վախճանը , այս մէկը իրեն եթէ ոչ
բացարձակ ստուգութիւն , գոնէ ամե-
նակարելի հաւանականութիւն պէտք է
կարծես ընդունել որ պատերազմը կը
մնայ տեղական , կղզիացած , սահմանա-
փակուած միմիայն երկու անմիջական
հակառակորդների միջեւ , ինչպէս նա
է այժմ :

Նորագոյն կատարուող իրողութիւն-
ները այդ են ցոյց տալիս . Արցախը ,
որքան էլ Մայրաքոյն-Արեւելքի երկնքի
վերայ միջոցաւ բռնուած լինի սեւ ,
մութ , սպառնական ամպերով , այնու
ամենայնիւ , այդ սեւութիւնը , այդ մը-
թութիւնը կարծես այնքան ոյժ չունին
ապրածուելու շատ աւելի հեռուն :

Գրեթէ ճիշդ նրա հանդիպակաջ կող-
մով , Մայրաքոյն-Արեւմուտքում , ճիշդ
եւ ճիշդ այն երկու տէրութիւնների
միջեւ , որոնք ամենից աւելի առաջա-
ցած են գտնուում դէպի պատերազմ
սահեցնող զառիվայրի վերայ , ուղղում
ենք ասել Անգլիայի եւ Ֆրանսիայի մի-
ջեւ , կատարուում են բոլորովին այլ
գոյնի , բոլորովին այլ տեսակի յարա-
բերութիւններ , երկու տէրութեանց
Արաաքին գործող նախարարները , Լորդ
Լանդսդաունը եւ Պարոն Դէլկաստէն ,
վարում են , ամենաշնորհ զգացումներ
հողի վերայ , խիստ կանոնաւոր եւ մը-

շակուած բանակցութիւններ , որոնց
նպատակն է լուծել , կարգադրել , հա-
մաձայնութեան գալով , եթէ ոչ վերջ-
նականապէս , գոնէ ժամանակաւորա-
պէս , այն բոլոր վէճի տակ գտնուող
եւ կռուի առիթ տալու բնաւորութիւն
ունեցող ինչիւնք , որոնք այդ երկու
տէրութեանց միջեւ երկար ժամանակից
առկա մնացած լինելով՝ մշտական
ցրտութեան , մշտական լարման եւ ան-
համակրութեան մէջ էին պահոււ փո-
խադարձ յարաբերութիւնները :

Յայտնի է որ Ֆրանսիան միշտ դժգոհ
եւ բողոքող դէմ է ցոյց տուել Անգ-
լիային , սրա եղբայրացու ի վնաս իրեն
ձեռք բերած ազդեցութեան գերակշը-
րութեան պատճառով : Այդ գերակշը-
րութիւնը ժամանակին պատկանում էր ի-
րան , Ֆրանսիային որ սակայն անձա-
րակ , թոյլ եւ վարանոտ քաղաքակա-
նութեան հետեւելով Ֆրէյսիւնէի նա-
խարարութեան օրով , կորցրեց այդ ազ-
դեցութիւնը , թողնելով իւր միջակցին ,
Անգլիային , գրաւել նրան : Իայց այդ
յափշտակութիւնը չանցաւ առանց ֆը-
րանսական հպարտութեան վերաւորանք
ազդելու : Իացի դրանից , Ֆրանսական
ստատեական , մասնաւոր չընտանի
կարեւոր շահեր կային խողի մէջ . Մա-
նիթ Ֆաշալայի դէպքը մի առիթ էր
միայն , որի ետեւը թագնուած էր Ե-
գիպտոսի հարցը եւ որ կարող էր պա-
տերազմի ծանր վտանգներին մասնեւ
երկու հզօրագոյն եւ դրացի տէրու-
թիւնները Եւրոպայի Իայց վտանգը
անցաւ Ֆրանսիան անպատրաստ էր կըռ-
ուելու եւ չկուեցաւ :

Եւ այժմ , շնորհիւ ներկայ բանակ-
ցութիւնների , շնորհիւ մօտիկ անցեա-
լում կատարուած փոխադարձ կայսե-
րական եւ նախագահական այցելու-
թիւնների , շնորհիւ վերջին աշնան
կնքուած անգլո-ֆրանսական իրաւա-
խոհական դաշինքին , երկու համակրելի
պաշտոնակարգ ուսմակարակն տէրու-
թիւնների միջեւ ոչ միայն բարեկամա-
կան զգացումները փոխարինում են թշ-
նամական զգացումներին , այլ եւ այդ
եղբայրական խնդրը երկու մեծ ազգե-
րի միջեւ գոհացուցիչ կարգադրութեան
գալու համար ամեն հաւանականութիւն
ստեղծուած է երեւում : Ֆրանսիան հա-
մաձայնում է Նիդպոտում ճանաչել ի-
րերի այժման գրութիւնը . նա համա-
կերպում է անգլիական իրական տիրա-
պետութեան այնուհ , շնորհելով նրան
«վարչութեան զիրարութիւններ» , բայց
պահպանելով անխախտ այդ երկրի ան-
ուսական տիրապետութիւնը , որ պատ-
կանում է անշուշտ նստիվին , Սուլ-
թանի գերիշխանութեան աակ :

Այս զիջողութեան փոխարէն , Նիդ-
լանդս յանձն է առնում պահպանել
Նիդպոտում միջազգային հաստատու-
թիւնները եւ աւելի մեծ երաշխաւո-
րութիւններ ընծայել Ֆրանսական ար-
ժեթիջութեանը : Իացի դրանից , եւ
որ աւելի է , Անգլիան համաձայնում
է չհակառակել Ֆրանսական նպատակ-
ներին Մարքի վրայ եւ նրան թողնել
ազատ իւր շարժումները մէջ՝ արդ
անշխան վիճակին մասնուած երկրի
վերաբերմամբ , պայմանով , սակայն
որ Ֆրանսիան որ եւէ արգելք կամ
դժուարութիւն չարտաբանէ անգլիական
վաճառականութեան առաջ այդ երկրի
մէջ , ուր անգլիացի վաճառականներ
կարեւոր շահեր ունին խողի մէջ
դրած . բացի դրանից , նա չբարձրա-
ցնէ ձեռքարկութիւնները ոեւ է ամ-
բութիւն :

Այս է , ընդհանուր գծերով , երկու
տէրութեանց միջեւ ընթացիկ բանակ-
ցութեանց համառոտ ամփոփումը ,
վերաբերմամբ Նիդպոտին եւ Մարք-

իւն : Թէ ինչ ընթացք կտան իրենց
Սպանիան եւ Թիւրքիան կատարուած
այս համաձայնութեանց հանգէպ , այդ
ցոյց կտայ մօտիկ ապագան , բայց որ
այս վերջին երկու տէրութիւններն էլ ,
որոնք ամենամօտիկ շահագրգռուողնե-
րն են խնդրի տակ եղած երկրներին ,
առաջինը՝ Մարքին , որ իւր երկրի
դէմ ու գէմն է , երկրորդը՝ Նիդպոտ-
ին , որի գերիշխան պետութիւն լի-
նելուց երբէք հրաժարուելու միտք չէ
ցոյց տալիս , այժմանից խիստ ան-
հանգիստ , խիստ վրդովուած են երե-
ւում՝ այդ էլ օրուայ հեռագրիւնների հա-
ղորդած եւ քաղաքական աշխարհին
ծանօթ իրողութիւնն է :

Ինչպէս որ էլ լինի , թուում է որ
շնորհիւ Անգլո-ֆրանսական յարաբե-
րութեանց մշակուելուն , շնորհիւ ի-
րանց մէջ մշտական կազմու թէլի հա-
մարուած կէտերի խաղաղ կարգադրու-
թեան , որ թէեւ տակաւին բանակցա-
կան չընթանում է գտնուում . բայց որ
խոտանում է ի մտոյ վերջնականա-
պէս աւարտելու եւ երկուստեք ստո-
րագրուելու , եւրոպական ընդհանուր
պատերազմի երկուղը աւելի ու աւելի
ցրուելու երեւոյթ է ստանում :

Միւս կողմից , Գերմանիայի կայսրը ,
որ անգլո-ֆրանսական բանակցութիւն-
ներին այնպէս էլ անհաշտ աչքով չէ
նայում , նայելով Գերմանական մա-
մուլի մի կարեւոր մասի գործածած
լեզուին , եւ որ նոյն իսկ կարծես
ուղղում է նաեւ որ ֆրանսայի ու-
շաղղութիւնը գրաւուած լինի զաղթա-
կանութիւնների հարցերով , ըստ որում
անգլո-ֆրանսական համաձայնութեան
կէտերը վերաբերում են բոլորն էլ
զաղթականութիւններին-իւր դէպի ի-
տալիա կատարած ճանապարհորդու-
թեան փոթով , նապօրում արտա-
սանած բաժակաճառի մէջ , յայտնա-
նապէս վեր հանելով եռապետական
դաշնակցութեան ամբողջութիւնը , սրան
իրեւ երաշխաւորութիւն ներկայա-
ցրեց եւրոպական խաղաղութեան պահ-
պանման :

Մնալով ուրեմն այս իրողութիւննե-
րի վերայ , խաղաղութիւնը եւրոպա-
յում կարելի է համարել առ այժմ ա-
պահովուած . եթէ , ի հարկէ , չծագին
կամ ծայրագոյն արեւելքից , կամ
ուրիշ կողմից , օրինակ մօտագոյն
Արեւելքից , ուր իրերի գրութիւնը
տակաւին հեռի է վերջնականապէս
հաստատուելուց , հակառակ աւստրո-
ուսական բարենորոգմանց ծրարին ,
անակնկալ նոր դէպքեր , նոր պա-
տահմունքներ :

Ինչպէս որ էլ լինի եւրոպական իա-
ղաղութիւնը , մասնաւոր Անգլո-ֆրան-
սական համաձայնութիւնը , կարեւոր
եւ զօրաւոր տարր պէտք է նկատել
նաեւ մօտիկ արեւելքի կիւմիւնների
աւելի չբարդուելուն եւ այդ կէտի
վերայ էլ խաղաղութեան չլրողութեւն
մի հանգամանք , որ կարծու է ենք , շատ
եւ շատ տեսակէտներով ցանկալի է :

Հ . Խ .

ՄԱՅՐԱԳՈՅՆ ԵՒ ՄՕՏԱԳՈՅՆ

ԱՐԵՒԵԼՔՆԵՐԻՆ



Պատերազմի ստաւածոյն ձոն-
ւած ամբողջ դեռ չլիւրջացաւ : Ինչպէս
միջոցաւորութիւն մէջ հովը եւ ամպերը կը
կռուին , զարնալիս լուսերեւ արեւին
դէմ , որ իւր տաշուկ իշխանութիւնը
կուգէ վերահաստատել միւր վրայ : Քա-
ղաքական միջոցաւորութիւն մէջ
դէպքերու եւ շահերու ոչ նուազ կատարի
ընդ-

հարումներ տեղի կ'ունենան երեք
մասնաւոր՝ կէտերու վրայ , Ասորցմէ
ամենէն հեռաւոր՝ բայց նաեւ ամենէն
հեռաւոր քաղաքներ՝ ծայրագոյն արեւելքի
պատերազմն է անշուշտ . հակառակ
լուրերու նուազութեան եւ անորոշու-
թեան՝ ցամաքին վրայ մեծ բախումի
մը համար պատրաստութիւններ ան-
դուլ յառաջ կը մղուին : Թշնամի բա-
նակները տակաւին մալու գետը կը
նկատեն իրենց յառաջացման վերջին
եւ ամենէն հաստատուն սահմանը , թէ-
պէտ փոքրիկ զօրաբաժիններ երկուս-
տեք իշխանի հողին վրայ դեպքիւ կը
համարձակին : Ծարձոցները այս մասը
եւ կա՛ն արշաւանքներուն մէջ շատ
կ'զոռչանան Ռուսներուն զարնուելի-
կըսուի թէ Ռուսները արդէն 200,000
ի չափ զօրք ունին Մանչուրիոյ մէջ .
պատկաւելի թիւ մը որ յամբօրէն
բայց յարատեւօրէն կաւեցայ : Զօրքե-
րու փոխադրութեան եւ ռազմամիջո-
քի եւ ուրիշ պէտքերու հայթայթումի
մասին շատ մը զայնակալից զորոյնիւր
կը չըջին . որպէս թէ Ռուս զինուո-
րական պետերը ախտաբան կը չահա-
գործեն ազգային ճգնաժամը , Բանա-
կին յատկացուած գումարներէն , հայ-
թայթիւններու հետ համաձայնելով՝ խո-
շոր պատաներ կը խորեն եղիւր , այն
գովիւր հաւաքուով թէ իրենց վատթ-
րէն զրկած եւ լքած զօրքերը ցուրտին
ու վերահաս հիւանդութեանց դէմ Աս-
տուած կը խնամէ :

Իրեւ փոքրիկ շնորհ մը թող նե-
րուի մեզ առ աչքի զարնող կէտն ալ
իջելու թէ՛ Ռուսիոյ զինուորական
պաշտօնանիներուն բաւական ստուար
մէկ մասը Գերման անուներ կը կրեն ,
ինչ որ Գերման տարրին Զարին կայս-
րութեան մէջ բռնած դիրքին մասին մե-
զի գաղափար մը կուտայ :

Ռուսներուն կրած առաջին պար-
տութիւնը Ալէքսիւվի համար շատ ա-
ղետաբար եղաւ : Զարը իւր փոխանոր-
դին վրայ վստահութիւնը կորսնցնելով՝
հարկադրուեցաւ թէ՛ ծովէն եւ թէ՛
ցամաքէն անոր օդանավներ նշանակե-
լու : Ալէքսիւվի ուղղուած կայսերա-
կան բացատրութեան համեմատ՝ Գորբո-
բաթիւնը եւ ծովակալ Մակարովը՝ փո-
խաբային (Ալէքսիւվի) վերին իշխա-
նութեան տակ անկախօրէն գործելու
իրաւունք ունին : Այդ երբեմնի կիս-
ստատւածին անկումը շատ մեծ է . իրեն
կը մնայ հիմա դեռ իւր փոխաբայու-
թիւնը , զոր իրեւ քաղաքական տիտ-
ղոս մը կրնայ զինուորական ընթիմի
տակ գտնուող երկրի մը մէջ անխախտ
կրել . . . եթէ հաճի գործի չխառնուել :

Մոլդու վրայ ծարձոց դեռ իւր յար-
ձակողական դիրքը կը պահէ՝ Փորթ
Արթուրը եւ վստահութեամբ նորագոյն
միջոցներով ուղեւորուելով : Թէպէտ
այս կողմերը մնալ օրը երկու անգամ
Փորթ Արթուրի առումին մասին հաւ-
աս լուրեր կ'ստանանք՝ հաւանական
չլ թէ ծարձոցները լրջօրէն կը յու-
սան ի մօտոյ այդ անառիկ բերդաքա-
ղաքին տիրանալ : Իրենց յարձակում-
ները պարզապէս պատուարներ են , ո-
րոնց ետին ցամաք զօրք կը հանեն
եւ , Քորէայի ծովեզերքին վրայ , իրենց
աւելի նպատաւոր կէտեր կը գրաւեն
ծարձոցները լու կը հասկան թէ
նոր յաւելումներով եւ փնտրուած նա-
ւերուն նորոգումով՝ Ռուսական նա-
ւատորմիդ կրնայ իւր նախկին գերա-
կանութիւնը կրկին ձեռք ձգել եւ իւր
պաշտպանողական դիրքն դուրս գալ :
Հետեւաբար , եթէ կրնան ու եւ գնով
Փորթ Արթուրի նաւահանգստին մուտ-
քը խցել՝ ասով թէ՛ Ռուսական նաւա-
նի գործողութիւնները վերջնականա-
պէս անհամարձակ կ'ըլլան եւ թէ՛

Քօրէյի արեւմտեան եզերքը ծովի կողմէն ապահոված կ'ըլլան : Բայց Հօպսոնեան մէջոտը, զոր երկու անգամ է կը փորձեն՝ ճիշդ վերջին վայրկեանին կը ձախողի : Կ'ըսուի թէ ճարտիւնները ամեն քիչ խորհող եւ շատ սովորող մարդոց պէս զուրկ են միտքի այն ճիւղերէն, որով եւրոպացիները գիտեն անակնկալ անակնկալ հնարքով մը դիմաւորել : Սյո պատճառաւ է որ նոյն միտքը կը յամառին կրկնել : Սակայն միւս կողմէն ալ Ռուսներուն անհոգութիւնը, կարծես, անբուժելի խառն մըն է : Ինչո՞ւ ճարտարական նաւերուն զաւր անգամ ուշ են դիտել եւ միայն մէկ պահանջը թորելու անուով մը անոնց պէս են ելել :

Բազաքական միջոցներուն երկրորդ ուշադրաւ կէտը մօտաւորագոյն Արեւելքն է : Դուրք թէ՛ Մակեդոնիոյ բաւականագոյն համար պատրաստուած Միւրթիէի յատակագիծը եւ թէ՛ Պուլկար զիւսնադէտ նաչէվիչին ծրագրած թըքօ Պուլկարական համաձայնութիւնը երկար շաղկերէ եւ ձգձգումներէ վերջ ընդունած է : Բայց ցաւը այն է որ Ռուսիոյ եւ Աւստրիոյ Պօլսական Դիւսպանները եւ Պուլկար գործակալը՝ որոնք ծովէն անվտանգ անցած ըլլալուն համար իրար եւ ինքզինքին արագին կը շնորհաւորեն, հիմա թաւ մը ջրի մէջ կը խեղդուին կարծես : Որպէս զի նաչէվիչին պայմանագրութիւնը գէթ կոկիկ եւ պաշտօնական ձեւ մը առնէ՝ միայն բան մը կը պակսի—Սուլթանին կնիքը : Եւ այդ ալ իւր օսկեհամուկ տուփէն գուրս ելած չունի առ այժմ : Գալով բարեկարգութեան՝ հիմա ալ Մակեդոնական ոստիկանութեան մէջ գործածուելու օտարահաւատակ պաշտօնեաներն են վիճարկութեան առարկայ : Թուրքիա ասոնցմէ միայն քսան եւ հինգ հատ կարծես՝ մինչդեռ Ռուսո Աւստրիական համաձայնութիւնը վաթսուն հատ դնել յարմար է դատե՞ր : Այսպէս եւրոպայ չինուած բարեկարգութեան կուրքը տաճկական հողի վրայ ամեն մեկ քայլափոխին ցիւրի մէջ կը խրի : Զէ՞ որ գաղտնի անձերու աշխատ եղանակին մէջ ենք : Բնական է, ճամբաները աւրուած են :

Իրողութիւնը սա է որ դուրս կառուցին վճռողական քայլ մը առնել չուզեն : Եւ Հետեւաբար Մակեդոնիոյ մէջ կացութիւնը կը մնայ երկար փամփուկ՝ սպառնալիք մը Պալքանեան խաղաղութեան :

Շահեկան կէտ մըն ալ : Սուտ թէ իրաւ, տարածարկութիւն մը կայ թէ Ալպանական սպասամբութեան վարիչները Աթէնքէն ներշնչուած են եւ նպատակ ունին Ալպանիան Յունաստանի կցել : Հապա մեզ ալ կը պատմէին թէ գեղանին Հէլլադա իրեն թուլամորթ զաւակներուն յաղթող թուրքիական վրայ անանկ սաստիկ «սէվտա» մը ձգել է որ ամեն անգամ զայն միտքը բերելուն՝ վրան մարմուք կուգայ եղբւր : Ուրեմն մինչեւ հիմա խաղցածը Դալիլայի աղտոտ դերն է եղել :

Օրին

(Շարունակելի)

ՄԱՋԻՆԵՐԿ

ՎԵՆԻՍ

Այս ներկը սքանչելի է իր տեսակին մէջ : Երբէք չը բերանորիւ մորթը եւ գործածութիւնը խիստ դիւրին է :

Հինգ ֆր. ի փոխարէն կարելի է ստանալ Տիար Ա. Զարպանէլեանէ : Վառնա

ԼՈՅՍ ՏԵՍՈՒ

ԲԱՌԱՐԱՆ

ՊՈԼԿԱՐԵՆԵ-ՀԱՅԵՆԵ-ՏԱՃԿԵՆԵ

Կը բաղկանայ 592 երեսներէ, պարունակելով մօտ 30,000 բառեր եւ ոճեր : Ընտրելով թուղթ, մայրու սպարոսիւն, եւ շինել կարգով :

Սկիզբը, բացի Յառաջաբանէն, ունի քերականական կարեւոր Գիտելիքներ : Եւ կանոններու ամփոփումը (40 երեսի չափ) : Մէկ խօսքով բառարան մը որ իւր պարունակութեամբ, եւ իւր չափաւոր գնովը ամենէն յարմար օժանդակը կը հանդիսանայ պուլկարէն լեզուն սովորել փափաքող ամեն զօտակարգի մարդոց, թէ՛ ուսանողին, թէ՛ վաճառականին եւ թէ պարզ արհեստաւորին :

ԳԻՆ 5 ՁԻԱՆՔ

Դիմել հեղինակին

ԱՍՍՏՈՒՐ ՄԻԳՏԻՉԵԱՆ—ՍՕՍԻՊ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵՂ

Պալքանեան մեղ կը հաղորդեն հետեւեալը, զոր հաճոյքով կը հրատարակենք :

Պալքանեան հայ դաղթականաց մէջ ժամանակէ մը ի վեր ազգային զգացումը արթնցած է, կուզեն պահպանել իրենց ազգային գոյութիւնը, վեց ամիսներ առաջ, առաջին անգամ ըլլալով բացին մանկապարտէզ մը՝ ուր կը կրթուին 20է աւելի մանկտիք՝ որ առաջ կը յաճախէին յունաց եւ պուլկարաց վարժարանները : Այս մանկտիներու մէջ կային որ մայրենի լեզուն իսկ խօսիլ չէին գիտեր, մանկապարտէզը հաստատուած է 2 սենեակով վարձեալ տան մը մէջ, որ շատ յարմար չէ :

Տեղւոյն ազգայինք կը փափաքեն ունենալ գոնէ ազգային չէնք մը՝ մեծ սրահ մը յարակից երկու սենեակներով եւ հոն փոխադրել մանկապարտէզը, թէեւ աննշան է տեղւոյս բարեկեցիկ ազգայնոց թիւը, սակայն հոգաբարձութիւնը կաշխատի անխտն՝ եւ յոստալի է որ մօտաւոր ապագայի մէջ յաջողի իւր նպատակին մէջ եւ ունենան Պալքանեան հայ իւրեանց ազգային տունը :

Պալքանեան հայ տիկիները եւ ձեռնարկած ձեռագործներ շինել եւ նուէրներ հաւաքել վիճակահանութիւն մը պատրաստելու համար, ի նպաստ հաստատութեան դպրոցի շէնքին : Յուսալի է որ այս վիճակահանութեան արդիւնքովը գնուի պէտք եղած գետինը, որ պատրաստ է քաղաքին կեդրոնը : Ամէն գործի մէջ առաջին քայլերն են դժուարին : սկսիլը կէս մը կատարել է, ազգային պատիւը կը պահանջէ որ ամէն հայ դաղթականութիւնը, ուր որ ալ գտնուին ունենան իրենց կեդրոնավայրը եւ իբրեւ ազգ գոյութիւնին ապացուցանեն : Մեր նախնիք իւրեանց արեան գնով պահպանած եւ մեզ աւանդած են

կրօնք մը, լեզու մը, որ նուիրական են մեզ համար, եւ անարժան զաւակներ են անոնք որ անտարբեր կը գտնուին եւ կօտարանան : Մեր ազգայինք պէտքէ արժանապատուութեան խնդիր մը համարեն եւ ուր որ գտնուին ունենան իրենց դպրոցը եւ եկեղեցիներն :

Մեզ կը հաղորդուին նաեւ հետեւեալ նուիրատուութիւնը որ եղած են ի նպաստ Պալքանեան դպրոցին, ի Վառնա :

Տիարք.	Ս. Գուրուսեան ֆր.	25
Կ. Պէզադեան	»	20,60
Մ. Մ. Փափազեան	»	20,60
Կ. Կ. Փափազեան	»	20,
Բաֆալէ Գալիսի	»	15,
Նեսեմ Կերոն	»	10,
Պարնաթան Արտիթի	»	10,
Էդիսապ Արտիթի	»	10,
Ստեփան Տէմիրճեան	»	10,
Բարսեղ Սիւլաքեան	»	10,
Արամ Սթամպուրեան	»	5,
Ոմն	»	4,
Գէորգ Նալբանդեան	»	3,
Ոմն	»	1,60

գումար

» 164. 80

Հաւաքեալ ձեռամբ Տիար Կարապետ Զաղարեանի :

ԱԶԳԱՅԻՆ

Սուրհանդակէն կարտատրււածներ :

Մայր աթոռոյ եկեղեցական գործերուն նկատմամբ որ եւ է նոր տեղեկութիւն չկայ Պատրիարքարանին մէջ :

Երէկ գրած էինք թէ Ս. Հայրապետը տկարանալով վերադարձեր է Ս. Էջմիածին : Այս վերջին հիւադութիւնը յառաջ եկեր է այս միջոցին այդ կողմերը տիրող օդերու տարօրինակ խտութենէն : Ս. Հայրապետը այս միջոցին կը նեղուի եղբւր անքնութենէ եւ ախորժակի տրեւաութենէ :

Ասկէ առաջ Ս. Էջմիածնի գանձարանէն գրաւուած տոկոսաւոր արժեթուղթերուն եւ բաժնեթուղթերուն տոկոսի կարօնները ներքին գործոց պաշտօնատան կողմէ շրկուել են Էջմիածին, որպէս զի գանձուելով վանքերու, եկեղեցիներու եւ թեմական դպրոցներու պէտքերուն գործածուի : Այդ կտրօնները 7-8 ամիսէ իվեր գանձուած չըլլալով, բաւական կարեւոր գումար մը կը ներկայացնեն : Կըսուի թէ այս կտրօնները Ս. Կաթողիկոսին կողմէ ետ պիտի շրկուին, քանի որ մայր թեմը չի տրու չին :

Քանի մը ուրիշ եկեղեցականներու ալ բնակութեան համար եւրոպական Ռուսաստան զրկուելու լուր կայ : Կըսուի թէ գաւազանակիր եւ հայրապետական դիւանապետ Տ. Կորիւն Վ. ալ պիտի շրկուի բաւական հեռավոր տեղ մը :

—Պուլկարիայէն Պատրիարքարան գրուած նամակէ մը կը

տեղեկանանք թէ Վառնայի վիճակի դիւաքազաքներէ Գոլլուճայի մէջ վաղուց ի վեր հաստատուած են քանի մը հայ ընտանիքներ, սակայն ասոնց հոգեւոր պէտքերը առաջուրէն ի վեր կը մատակարարուին տեղւոյն Պուլկար քահանային միջոցաւ : Այս անգամ տեղւոյն նորընծայ պուլկար քահանան Խըրիսթօ Խլանով մերժեր է այդ ընտանիքներուն տունը երթալ օրհնէքի եւ Ս. Հաղորդութիւն տալ տաղաւարներուն, Կաւարկելով որ զիրենք սեղափառ չի ճանչնար, բայց թէ ինք աղերսագիր մը պատրաստած է, զոր եթէ ստորագրեն, այն պատեն զիրենք պիտի միւրթարէ հոգեւորապէս : Նոյն ազգայինները այս ստիպման վրայ յանձն առել են ստորագրել այդ աղերսագիրը : Շաբաթ մը վերջը, որու միջոցին թերեւս այդ քահանան խնդիրը աղերսագրին հետ տեղւոյն միտրոպոլիտ Տ. Սիմէօնին ներկայացուցած ըլլալու է, նոյն ազգայինները պուլկար քահանային միջոցաւ Պուլկարաց եկեղեցին կը տարուին ուր միւսուսնով կը դրօշմեն զիրենք ու յետոյ Ս. Հաղորդութիւն կուտան : Քահանային այս արարքին վրայ այդ ընտանիքները վերջապէս Վառնայի եկեղեցական մարմնոյն կը գիմեն իրենց վիճակը յայտնելով : Նոյն մարմինը խնդիրը կը տեղակազրէ Պատրիարքարան, տեղեցնելով որ պուլկարական օրհնէքին մէջ չկայ տրամագրութիւն մը որ հարկ դնէ պուլկար քահանային վրայ համար նման ընթացք մը այդ ընտանիքներու հանդէպ : Նեղ պարագային մէջ յիշեալ քահանան եւ մետրոպոլիտը պարտաւոր էին խնդիրը ծանուցանել Վառնայի եկեղեցական մարմնոյն : Հետեւաբար խնդիրը կը յանձնուի Ս. Պատրիարքին ուշադրութեան, որպէս զի ազատին այդ դժբաղդ ընտանիքները մայրենի եկեղեցիէն ի սպառ բաժնուելու վտանգէն :

Խմբագրութեանս ստացած տեղեկութեանց նայելով ասոնք երեք ընտանիք են միայն, որ իրենց հոգեւոր պէտքերուն համար երբեմն Վառնայի Հայոց եկեղեցին կը գիմեն, Էրբեմն ալ Տոպրիչի :

Վերոյիշեալ գրուած արարողութենէն յետոյ, որոյ ենթադրուի որ անդիտակցաբար կին մը եւ աղջիկ մը միայն, եւ ոչ ամէնքը, երեք ընտանեաց կողմանէ այդ մասին գանդատագիր մը կը շրկուի քաղաքիս նախորդ թաղական Խորհրդոյ, որ գործը կը յանձնէ քահանայական մարմնոյն : Այս վերջնոյն կողմանէ պէտք եղած բոլորը կ'ըլլուի քաղաքիս պուլկար Մետրոպոլիտին, որ կը խոստանայ քննութիւն մը բանալ :

Միւս կողմէն Տ. Սարգիս քահանայն կը պատրաստուէր մեկնել դէպի Գողթուճա, եկեղեցիական պարագաներն ստուգելու համար, երբ Պատրիարքարանէն հրաման կ'ստանայ Սուլալա երթալ:

Այսպէսով գործը կը մնայ առայժմ առկա վիճակի մէջ:

ՏՕՊՐԻՉԷՆ գրուած նամակի մը համեմատ, ամսոյս 21 ին կատարուէր է հոն թաղական խորհրդոյ անդամոց ընտրութիւնը որուն մասնակցելու են անխտիր տեղացի թէ եկ ազգայինը:

Ընտրուել են Տիարք

Մկրտիչ Պուրկազլըեան
Յովհաննէս Պողոսեան
Յարութիւն Մկրտիչեան
Յակոբ Ապահեան
Յարութիւն Կոկոյեան

ՐՈՒՍՉՈՒԹԷՆ քաղաքս հասած է «ՆԱՏԷՏԱ» Հայ գերատնտեսական խումբը եւ յառաջիկայ Զատիկի առաջի օրէն սկսեալ իր հիմնարկի ներկայացումները պիտի սկսի:

ՎԵՍԵԼՈ խումբը քանի մը օրէ ի վեր քաղաքը կը գտնուի: Արդէն երեք ներկայացում տուած է «Սանդրալ» Սրահին մէջ ի ներկայութեան ամեն ազգէ խումբն ընդունան:

Վերջին կերպի գիշերուան ներկայացման ներկայ էին քաղաքիս կառավարիչը Սօֆիայի ոստիկանապետը եւ երեք նախարարները:

Ներկայացման միջոցին ոստիկանապետը տեսակցելով Տիար Պենյանի հետ, շնորհակտութիւն է դրոյն իր դաւանական տաղանդին մասին:

ԹՈՒՐԹԻԱ

—Կ. Պոլսէն կ'իմացունեն որ 4000 մահմետական ուխտաւորներէ բաղկացեալ կարաւան մը, դէպի Մէտինէ վերադարձած միջոցին, խողովուրներ է պետուին արապներէն:

Կ. Պոլիս մարտ 20

—Աւստրիոյ Հունգարիոյ եւ Ռուսիոյ դեսպանատուներ այսօր յուշագիր մը յանձնեցին Դրանի պատասխանի նորա 16 մարտ ամսաթիւ ծանուցագրոյն: Այս յուշագրոյն մէջ դեսպանատուները ամենակտրուկ կերպով կը պնդեն իրենց նախկին պահանջմանց վրայ, ի մասին ոստիկանութեան վերակազմութեան եւ սպաներու ու ենթասպաներու թուոյն:

Ոստիկանութեան վերակազմութեան յանձնաժողովը (օտար պետութեանց ներկայացուցիչներէ բաղկացեալ) իր այսօրուան նիստին մէջ զբաղեցաւ օտար սպաներու պայմանագրութեամբ, ոստիկան կանոնագրով եւ համազգեստի հարցերով:

Սասունի գաւառի վիճակին եւ հայ խմբապետ Անդրանիկի մասին եւ ոչ մէկ լուր կայ: Մուշի մէջ ցարդ 11 ընկալած զօրք հա-

մախմուած է: Դեռ նոր ջակատներ կ'սպասուին Խարբերդէն եւ շրջակայներէն:

Կ. Պոլիս մարտ 21

Քաղաքային գործակառարք իրենց դեսպանատանց կը հաղորդեն, որ Բլինիայի դէպքերու մասին տարածուած լուրերը խիստ չափազանցուած կը թուին: Ընդհանուր տեսչին (Հիւրի Բաշայի) զեկուցման նայելով, քննութեամբ հաստատուել է, որ միայն քանի մը հոգի թեթեւապէս վիրաւորուել են: Եւ ոչ մէկ յափշտակութիւն կամ կանանց բռնաբարութիւն ստուգուած է:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամսաւ 22 ին Սօֆիայի մէջ ժամը 12 ը 3 վայրկեան անցած ուստիկ երկրաշարժ մը զգացուել է, որ կրկնուել է ժամը 12 ը 27 վայրկեան անցած աւելի ստատիկ եւ շարունակեալ ցնցումով մը: Իսկ ապա ուրիշ տըկար ցնցումներ ալ զգացուել են:

Առաջին ցնցումէն յետոյ մայրաքաղաքին շէնքերը կ'աւելնէր զաղբերցան: Իսկ եեկրորդէն յետոյ լսուեալ առաւել առաւել թեթեւ սկսեալ են ցայտել:

Ցնցումը զգացուել է նաեւ Ֆիլիպէի Քիւսթէնտիլ խորն եւ ուրիշ քաղաքներ: Բաւական տուներ վնասուած են այս ամեն տեղեր:

Ցնցումը նոյն պահուն վառնայի մէջ ալ զգացուեցաւ բայց խիստ թեթեւ կերպով:

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ Ը

Լոնտոն, 19 մարտ. — Չինական իշխանութիւնը թոյլ տուին ճաբոնցոց ազատորէն բեռ փոխադրել Շանկայ-Կուանի երկաթուղւոյ գծին միջոցաւ:

Լոնտոն, 19 մարտ. — Կառավարութիւնը նաւաշէն ընկերութեանց ուղղած մէկ պատուէրովը յիշեցուց անոնց, թէ ինչ պատասխանատուութեան տակ կ'իշնային յանձնարարութիւններ ընդունելով պատերազմիկ երկու տէրութիւններու սեւէ մէկէն:

Բեգերսպուրի, 19 մարտ. — Ռուս կիսապաշտօնական շրջանակներուն մեծ մտահոգութիւն կը պատճառէ Չինացոց մէջ յուզումները: Իրենց ման պատահականութիւնը: Լրագիրք կըսեն որ Չինաստանի Ռուս-Ճաբոնական պատերազմին մէջ խառնուելը աւելի ծանրակրօն պիտի ըլլայ քան 1900ի պօքսէրներու ապստամբութիւնը: Չինական կայսրութեան կեդրոնին մէջ սատիկ հակակրթութիւն կը տիրէ դէպի օտարականները:

Բեգերսպուրի, 19 մարտ. — Ռու-

սական հեռագրական գործակալութիւնը կ'իմացնէ Լեւոն-Կէն, թէ քորէական հողին վրայ տեղի ունեցող առաջին ընդհանրուած Ռուսաց ջանքը պսակեց: Ճաբոնցիք Ռուսներէն տասնապատիկ աւելի կորուստներ ունեցան: Ճաբոնցիք 50 սպանեալ թաղեցին, իսկ 120 վիրաւորեալ տարին իւրեց բանակեալը:

Լոնտոն 20 մարտ

«Սանդրալ Նիուզ» լրագիրը իմացած է, թէ թօկօ ծովակալը հինգ շաբթի դիշեր փորձած է ի նորոյ Բորթ Արթուրի նաւահանգիստին բերանը փակել: Անոր փորձին հետեանքը դեռ չգիտցուի:

Լոնտոն 20 մարտ

Թօքիօյէն «Տէլի Էքսպրէս» ի կը հաղորդեն թէ Ճաբոնցոց Բորթ Արթուրի դէմ նոր յարձակման նպատակն է եղբր ծածկել իրենց փորձերը ջուրին խորութեան չափն հասկնալու համար, որպէս զի ճշդիւ գիտնան թէ որչափ է այն տեղին խորութիւնը ուր պիտի ընկղմեն նաւահանգիստին անցքը փակելու սահմանուած նաւերը:

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ

Ներոններու եւ ձէնկի խաներու Հայրապետիւնները գերազանցող «Մեծ Ոճրագործ» ին տխրահոյակ անունը եւ իր չըլալիք պատկերը կրող այս փառքիկ դիւքը կուրուանկարէ այն աներեւակայնի խժժութիւնները եւ ոճիւրները որոնք ամէն հայու սրտէ արեւն քամելով հանդերձ չեն դադրիր հետաքրքրական ըլլալէ:

Գին է 50 ՍԱՆԴԻՄ

Դիմել Դրաւմաճա Տ. Ա. Զարպահանէ խանի վառնա:

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

ԹԻՒՊՈՒՐՏ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր.
« Բ. « [433 էջ] 2 ֆր.
ՆՈՒ ԵՐԳՈՒՐԱՆ կամ ՄՐՄՈՒՆՉ ՀԱՅԿԱԿԱՆ Երկրորդ անգամ տպագրուած եւ ճոխացած. Գին 1 ֆր.

ՆԵՏԱ կը պատկերացնէ Պուլկարներու նիստ ու կացը ու թուրքերէ կըրած տառապանքը անոնց ազատութեան առաջ. Գին 50 անգիմ

ՀԱՅՐԵՆԻԹԻ ԶՈՔԵՐ Պատկեր մը ճաճկահայաստանի իրական կեանքէն: Զեղեալ գին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար դիմել ՎԱՌՆԱ «Ի Ր Ա Ի Ն Ք» ի խմբագրութեան
ՊՈՒԳՐԵՇ Տ. Օրնիկ ֆալագեանի եւ Տ. Յ. Պիպէճեանի
ԳՕՆՍՍԱՆՅԱՆ Տ. Սիսակ Մէլիքեանի
ԳԱՀԻՐԷ Տ. Կարապետ Էրզնկացեանի
ԱՂԵՔԱՆԴՐԻՍ Տ. Ստեփան Մալմանեանի
ՈՒՍՏՐ (Ամերիկա) Տ. Յակոբ Ֆրանգեանի
ՊՕՍԹՈՆ Տ. Ա. Ասքանազի
ՓՐՕՎԻՏԷՆ Տ. Մ. Տէր Պողոսեանի
ՖԻԶՊՈՒՐԿ Տ. Կ. Մարութեանի

ԿԱՐԵՒՐՈՐ ԱՄԷՆ ԸՆՏԱՆԻԹԻ

Զգեստեղէններ ներկայ եւ կեղտեր ու արասներ մաքրող Տ. Տ. Վ. Սթօրիօլ եւ իվ. Բէթթօֆի ծանօթ գործարանին վառնալի մասնաճիւղը կը գտնուի Զար-Պօլիս փողոցը նախկին շաքարատան տեղը:

Շոգիով կը ներկէ եւ գեղերով կը մաքրէ մետաքսէ թիկնոցներ. կիսամետաքսեղէն, բրդեղէն, կամ բանդակալուան կերպարներ. արանց կանանց եւ տղայոց հագուստներ, ձեռնոցներ, վերարկուներ, պլուզներ, անձրեւանոցներ, բրդէ բանդակէ մանածներ, գերման, շալիպա, վարագոյր, ծածկոցներ, եւ այլն:

Ուրիշ տեղերէ թող զրկեն մեզ եւ մենք գործադրելով կը վերադարձնենք Նոյն խանութիւն մէջ կը ծախուին հիւսուած ապրանքներ, ինչպէս գուլպաներ, ֆանէլա, թրեթ, հավլու եւն: Նաեւ ընտիր հոտեղէն, օ Տրօֆօն: Ներկայացուցիչ Ն. ՆԵՏԻՈՎ

ԹԻԻՃՃԱՐԻՅԷ

ՎԱՌՆԱ 20 Մարտ

ԶԱԽՈՒ Է

ՊՈՒՂՏԱՅ	
Վաւոն	54-59 լիպ. 6-11
Արապա	52-60 լիպ. 8-11 2)
ԱՐԲԱ	
Վաւոն 100 քիւ	8.50/8.70
Արապա 42-45 լիպ.	4 60 5-20
ՆՈՒՂԱՅ արապա 33/36 լիպ. 4, -/4,4)	
Վաւոն 100 քիւ	9.50/9-60
ՅԱՍՈՒԼԱՆ 100 քիւ	15/16-
Արապա 100 քիւ	14-16
ՏԱՐԸ արապա	57.59 5.80 6.00
ԳՈՂՁ արապա	8-8) 10-10
ՄԻՍԻՐ Վաւոն	7.5-7.10
ԶԱՎՏԱՐ արապա	6.60-7.20
« Վաւոն	6.40/6.90
Կրկնոն 30 -4)	Վաւոն վէ 80-100
արապա կէլմէլտէ Վաւոն մուամէլէսի	
նարթէն 20 ֆր. արապա մուամէլէսի	
նարթէն 20 80.	
ՍԱՐԱՅԱՅԻԹԷ	
Նարթէն 20, 65 ֆրանք	
Օսմ. լիւսար 22, 85 արթուի ֆրանք	
ՊԱՂԱՅԻԹԷ	
Վարնա բիւցարնտա պաղաւեյ	
մալլէրին պու կրկնի ֆիլաթը, ալթու	
ֆրանք իլէ:	
ԳԱՀՎԷ	1,80/2,21
ՇԷՔԷՐ Նէմցէ	61
ՇԷՔԷՐ [քէսմէ] սանաղդ	31,80
ԲԻՐԻՆՉ Թիլիպէ չուվալը	39,-
» Ժաբոն »	38,
» Ինկիլիկ »	26.50
» Բիդոն »	54 ֆր.
ԿԱԶ սանաղդը	10.40
ԶԷՑԻՆ Եաղը քիւ	80-90
ԵՈՒՄՈՒՐԹԱ 100 ատէտ	4,20-60
ԳՈՒՐՈՒ Էրզնկա	26

ԾՈՂՀԱՆՆԷՍ ՏԱՎՈՒՏԵԱՆ ՎԷ ԷՎԼԱՏԼՍՐ ՏՕՊՐԻՉ

Իւք պահար մէկսիֆի իշիւն մանի-ֆաթուրա վէ կալանթարիա մաղաղաւարմըզա Նէֆիս մալլէր, իրէքի վէ Եաղալը ֆիստանլըլար վէ սայրի եէնի չէլիւլէր Էլթիւլիշ օլմաղլէ, հէօր-մէլի միւշթէրլէրէր էզէր ճիւլթ մէմ-նուն Իտէպիլէճէկիմլիլի Իլան Իտուպ, իրըզա Էլիւն պիր տէֆա մաղաղաւարմըզա միւրաճաթ իթմէլէրլ ըճա օլունուր:

5-6

Одговорились А. Курбетиянъ
печатница "Взаимность" — Варна,